ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3, 1961 Общественные науки

Հ. Հ. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՎԱՆԴԸ ՍՍՌՄ ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄՆԵՐՈՒՄ

Կոմունիզմ կառուցող սովետական ժողովուրդը անհուն սիրով ... երախտագիտությամբ ընդունեց ՍՍՌՄ Մինիստրների Սովետի 1950 թ. երկրորդ կեսին հրապարակված՝ Կույբիշևյան և Ստալինգրադյան հիդրոէլեկտրակայանների շինարարության, Վոլգա-Դոն նավարկելի ջրանցքի կառուցման, Մերձկասպյան ու Զավոլժյեի շրջանների, Ռոստովի և Ստալինգրադի մարզերի անջրդի տարածությունները ոռոգելու մասին որոշումները։ Մեր երկրի բազմազգ աշխատավորները հաջողությամբ իրագործեցին այդ հսկայական կառուցումները, որոնք հավասարները չունեն կապիտալիստական երկրներում։

Կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման գործում այդ խոշորագույն կառուցումների նշանակության և նրանցում Հայաստանի աշխատավորների մասնակցության մասին է պատմում Հայկական ՍՍՌ ԳԱ կողմից վերջերս հրատարակված Հ. Հ. Ազիզբեկյանի «Հայաստանի աշխատավորների ավանդը՝ ՍՍՌՄ հիդրոտեխնիկական կառուցումներում. վերնագրով աշխատությունը։

Ներկայումս, երբ Սովետական երկիրը թևակոխել է Կոմունիստական հասարակության ծավալուն կառուցման ժամանակաշրջանը, էլ ավելի կարևոր նշանակություն են ստանում կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման պրոբլեմները։

Կոմունիստական շինարարության պայմաններում, բարձր տեխնիկայի հիման վրա ձեռք է բերվում արտադրության լիակատար ավտոմատացում, տնտեսության բոլոր ճյուղերի քիմիացում, էլեկտրիֆիկացման մաքսիմալ զարգացում։ Դեռևս 1920 թվականի փետրվարին Վ. Ի. Լենինը մատնանշում էր, որ սովետական կարգի հիման վրա ստեղծված էլեկտրիֆիկացումը կոմունիզմի հիմքերի վերջնական հաղթանակ կստեղծի մեր երկրում։ Կոմունիստական պարտիան իրականացնելով Լենինի նախագծումները, ՍՍՌՄ-ը դարձրեց համատարած էլեկտրիֆիկացման երկիր, դրանով իսկ լայն հնարավորություններ բնձեռնելով կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման, արտադրողական ուժերի նոր, հզոր վերելքի համար։

Վերոհիշյալ աշխատությամբ հեղինակը առաջին անգամ սովետահայ պատմագրության մեջ ընդհանրացնում է Հայաստանի աշխատավորների ավանդը Սովետական Միության խոշոր հիդրոտեխնիկական կառուցումների ստեղծման գործում։ Աշխատության սկզբում շարադրված են երկրի էլեկտրիֆիկացման լենինյան պլանի կենսագործման համար սովետական բազմազգ ժողովրդի ձեռք բերած նվաճումները, տրված է այդ խոշոր նորակառույցների ժողովրդա-տնտեսական նշանակությունը։ Հեղինակը կարողացել է բնորոշ փաստերով ցույց տալ, թե ինչպես, նախկինում հետամնաց ու ցարիզմի կցորդը հանդիսացող Հայաստանը լենինյան ազգային քաղաքականության շնորհիվ սովետական ժողովուրդների ընտանիքում դարձավ առաջավոր ինդուստրիալ և զարգացած գյուղատնտեսության երկիր և ռեսպուբլիկայի աշխատավորությունը հնարավորություն ունեցավ ակտիվ մասնակցություն ունենալու կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման, երկրի էներգետիկ ռեսուրսների կոմպլեքսային օգտագործման համար Կոմունիստական պարտիայի մշակած ծրագրի իրականացման գործին։ Աշխատության մեջ տրվում է Կոմունիստական պարտիայի ղեկավարող, կազմակերպող և մոբիլիզացնող մեծ դերը և ընդգծվում մեր երկրի խոշորագույն կառույցներում սոցիալիստական ազգերի տնտեսական համագործակցության կարևոր հարցը։

Բնորոշ է, որ Սովետական Միության յուրաքանչյուր խոշորագույն կառուցում իրագործում են բոլոր եղբայրական ռեսպուբլիկաները, երկրամասերը և մարզերը միասին։ Երկար ժամանակ չի անցել, երբ ՍՄԿԿ Կենտրոնական Կոմիտեն Սովետական Միության աշխատավորությանը կոչ արեց՝ հաջողությամբ իրականացնել հիդրոտեխնիկական կառուցումների՝ Վոլգա-Դոն ջրանցքի, Կույբիշևի, Ստալինգրադի, Կախովկայի հիդրոէլեկտրակայանների և այլ կառուցումների շինարարությունը։

Ժողովրդական լայն մասսաների նախաձեռնությամբ ստեղծվեցին Վոլգա-Դոն նավարկելի ջրանցքի կառուցմանը օգնելու մեջ 350 քաղաքներում և այլ բնակավայրերում գտնվող մոս

1500 սովետական արդյունաբերական ձեռնարկություններ կառուցմանը մատակարարում էին անհրաժեշտ նյութեր, մեխանիզմ և սարքավորում։

Երկրի բոլոր շրջաններից — Հյուսիսից և Հարավից, արևմուտքից և արևելքից — շինարարության վայրերը ուղևորվեցին հազարավոր սովետական հայրենասերներ, որպեսզի իրենց ավանդը ներմուծեն համաժողովրդական այդ գործում։

Վոլգա-Դոն ջրանցքի կառուցողների կոլեկտիվն իր կազմում ուներ 26 ազգությունների ներկայացուցիչներ։ Սովետական մարդկանց այդ բազմազգ կոլեկտիվը աշխատեց համերաշխ ու ջերմ և երևան բերեց արտակարգ եռանդ և ժողովրդական հերոսություն։

Հիդրոտեխնիկական կառուցումների շինարարությանը ակտիվ մասնակցություն ունեցավ նաև Հայաստանի աշխատավորությունը։

Հայկական ՍՍՌ-ի արդյունաբերական ձեռնարկությունները — էլեկտրամեքենաշինական, Կաբելի, էլեկտրատեխնիկական, Կոմպրեսորների, Հիդրոտուրբինների, Ավտոդողերի, Քիմիական, «Ավտոգենմաշ» և «էլեկտրատոչպրիբոր» գործարանները, շինարարական նյութերի արդյունաբերության, տեղական արդյունաբերության և արհեստագործական կոոպերացիայի ձեռնարկությունները,— ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին և շինարարությանը ուղարկեցին տարբեր սարքավորումներ և նյութեր՝ տրանսֆորմատորներ, գեներատորներ, պոմպեր, կաբելային արտադրանք, ավտոդողեր, կարբիդ, ավտոմեքենաների և տրակտորների պահեստամասեր, շինանյութեր և այլն։

Մեր երկրի կառուցումներին ցուցաբերված եղբայրական օգնության վառ օրինակ կարող է ծառայել Երևանի էլեկտրամեքենաշինական գործարանի կոլեկտիվի աշխատանքը։

Գովելի է, որ հեղինակը օգտագործել է հարուստ գրականություն։ Հատկապես հիշատակման արժանի է այն, որ աշխատության մեջ բերվում են փաստեր գործարանների արխիվներից և ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի տարբեր ինստիտուտների արձանագրություններից։

Աշխատության վերջին — չորրորդ և հինգերորդ գլուխները տալիս են Սովետական Հայաստանի գիտության, գրականության և կուլտուրայի աշխատողների մասնակցությունը համաժողովրդական կառուցումներին։ Հեղինակը հանգամանորեն լուսաբանում է ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի կոլեկտիվի, ինչպես նաև ռեսպուբլիկայի գիտական մյուս հիմնարկների մտցրած ավանդը հիդրոտեխնիկական կառուցումների ամենաբազմազան պատվերների կատարման գործում։ Օրինակ, ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Ջրաէներգետիկ ինստիտուտը իր վրա վերցրեց լաբորատոր նախագծման մեթոդներով Կույբիշևյան հիդրոհանգույցի ալիքային պրոցեսների հետազոտման բարդ խնդիրների լուծման պատասխանատու պարտավորությունը, որը հաջողությամբ իրագործվեց։ Ռեսպուբլիկայի գիտնականների ջանքերով ստեղծվեց Կույբիշևյան հիդրոէլեկտրակայանի մոդելը։ Աշխատության մեջ ցույց է տրվում, որ հիդրոտեխնիկական կառուցումների համաժողովրդական մեծ գործին մասնակցեցին նաև ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Շինանյութերի և կառուցվածքների ու Երկրաբանական գիտությունների ինստիտուտների գիտական կոլեկտիվները։ Երկրի հիդրոտեխնիկական շինարարության համար կարևոր նշանակություն ունեցող տեսական պրոբլեմների լուծման աշխատանքներին մասնակցեց նաև ակադեմիայի մաթեմատիկայի և մեխանիկայի սեկտորը, որն արժեքավոր հետազոտություններ կատարեց բետոնի սողքի և բետոնային մասիվի մեջ տեղի ունեցող երևույթների պարզաբանման բնագավառում։ Բացի դրանից, աշխատության մեջ նշվում է քիմիայի ինստիտուտի և Երևանի Կիրովի անվան գործարանի կողմից կատարված ուսումնասիրությունների մասին, որոնք նույնպես նշանավոր օգնություն հանդիսացան էլեկտրաշինարարության զարգացման համար։ Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետը ստեղծեցին բոլոր պայմանները՝ հիդրոտեխնիկական բարդ առաջադրանքները կատարելու համար։ Ռեսպուբլիկայի գիտնականները կատարելով երկրի խոշոր նորակառույցների պատվերները, օրըստօրե ընդլայնելով և հարստացնելով իրենց գիտական ստեղծագործական աշխատանքների շրջանակները, վերցնում են նորանոր պարտավորություններ՝ երկրում լայնորեն զարգացող էլեկտրակայանների, ջրանցքների և մյուս նորակառույցների գիտականգործնական խնդիրների լուծման համար։

Աշխատության վերջում Հ. Հ. Ազիզբեկյանը հատող ընդհանրացումներով տալիս է ռեսպուբլիկայի գրականության և կուլտուրայի աշխատողների մասնակցությունը համաժողովրդական կառուցումներին։ Հեղինակը ելնում է Կոմունիստական պարտիայի այն ցուցումից, որ սովետական գրականությունն ու արվեստը ավելի սերտորեն պետք է կապվեն կյանքի, Կոմունիստական շինարարության պրակտիկ խնդիրների հետ։ Այդ տեսակետից գրքում արժանի տեղ

է հատկացված սովետահայ գրողներ Ն. Զարյանի, Գ. Բորյանի, Դ. Էմինի, Հ. Շիրազի, Ս. Կապուտիկյանի, Յու. Սարյանի, Հ. Թումանյանի Հ. Սահակյանի, Մ. Հարությունյանի և շատ ուրիշների գրած ակնարկներին, ճանապարհորդական տպավորություններին ու բանաստեղծություններին, որոնցում նկարագրում են Հայաստանի աշխատավորության ակտիվ մասնակցությունը կոմունիզմի խոշոր կառուցումներին։ Գրողների հետ միասին համաժողովրդական այդ կառուցումներին իրենց համեստ ավանդը մուծեցին ռեսպուբլիկայի կինոարվեստի աշխատողները։ Նրանք նկարահանեցին մի շարք կինոժուռնալներ և խրոնիկաներ, դրանցով ցույց տալով Հայաստանի աշխատավորների սխրագործությունները համապետական այդ կառուցումներում։ Գրքի հեղինակը լուսաբանում է նաև ռեսպուբլիկայի մամուլի գովելի աշխատանքը աշխատավորների ուժերը մոբիլիզացնելու և հիդրոտեխնիկական գիգանտների պատվերը ժամանակին և ոյակով կատարելու գործում։

Հ. Հ. Ազիզբեկյանը հաջողությամբ է լուծել գրքում առաջ բաշված բոլոր հիմնական խնդիրները. գիրքը գրված է լեզվական բարձր մակարդակով և կարդացվում է մեծ հետաքրքրությամբ։ Սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ գիրքը կշահեր, եթե նշվեր ՍՍՌՄ-ում նոր էներգետիկ կառուցումների (գազի և այլն) գործում Հայաստանի աշխատավորների նոր ավանդը։ Ի վերջո ավելի ծավալուն կարելի էր տալ նոր, կոմունիզմի մարգու ձևավորման գործում այդ կառուցումների դաստիարակիչ մեծ դերը։

Ընդհանուր առմամբ Հ. Հ. Ազիզբեկյանի «Հայաստանի աշխատավորների ավանդը ՍՍՌՄ հիդրոտեխնիկական կառուցումներում» աշխատությունը արժեքավոր գործ է սովետահայ պատմագրության մեջ։

Պ. Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆ